



ՈՐՈՇՈՒՄ N 13

29 հունիսի 2015 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով, ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով և 3.4. կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (հարցման կարգով) որոշում է.

1. Թույլատրել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մաշտոցի պողոտա 52 հասցեում գտնվող 3140,6 քմ. մակերեսով շենք-շինությունները (ԵՊՀ հյուրերի տուն) և դրա օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0,180192 հա հողամասը (սեփականության վկայական՝ 01072015-01-0071) (այսուհետ՝ անշարժ գույք) օտարել մրցույթով:

2. Լիազորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորին՝

- 1) ապահովել անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման գործընթացի կազմակերպումը,
- 2) մրցույթը կազմակերպել և անցկացնել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան՝ այդ նպատակով ստեղծելով մրցութային հանձնաժողով,
- 3) մրցույթի հաղթողի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, իսկ գործարքից ստացված գումարը մուտքագրել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի բանկային հաշվեհամարին՝ հիմնադրամի զարգացման ծրագրերի իրականացման նպատակով օգտագործելու համար: